ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար կաթսաների վերանորոգման-պահպանման ծառայությունների ձեռքբերման նպատակով «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հոկտեմբերի 30-ին կնքված N ԴԴ-ԳՀԾՁԲ-17/02 պայմանագրում 2017 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ

Պայմանագիրը կնքվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն

Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը սահմանվել է համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 25.12.2017թ. ներառյալ, ինչպես նաև Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում

Պայմանագրի 4.1.1, 7.5, 7.13 կետեր:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

30.10.2017թ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԹՍԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ-ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/02» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 13 դեկտեմբերի 2017թ.

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ջերմաէներգո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Մելքոնյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 30.10.2017թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 4.1.1, 7.1 և 7.5 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով ֆինանսական միջոցների առկայությունը, Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման անհրաժեշտությունը, կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի N 1 հավելված հանդիսացող ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը սահմանել սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ մինչև 25.12.2017թ. ներառյալ (Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը և պայմանագրով նախատեսված ծառայությունների նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքված համապատասխան համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը):

1.2. Նախատեսված ֆինանսական միջոցների առկայությամբ պայմանավորված՝ Պայմանագրի N 2 հավելված հանդիսացող ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 2-րդ, 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը և հավելված N 2-ը հանդիսանում են N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ	***«Ջերմաէներգո» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 22/3, բն. 105
Հ/Հ՝ Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 2051022005371001
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 02508339
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Ինեկոբանկի Շենգավիթի մ/ճ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Մ. Մելքոնյան
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
« 30 » հոկտեմբերի 2017 թ. կնքված
«ԴԴ-ԳՀԾՁԲ-17/02» ծածկագրով պայմանագրի
<< 13 >> դեկտեմբերի 2017թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում	
			դեկտեմբեր	Ընդամենը
2.**	50531110/320	ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Մասիս քաղաքի նստավայրի վարչական շենքի կաթսայի վերանորոգում	267 000	267 000
4.	50531110/320	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի կաթսայի վերանորոգում	1 710 000	1 710 000
5.	50531110/320	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարչական շենքի կաթսայի վերանորոգում	989 000	989 000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

** Սույն չափաբաժնի գումարը կնքվել է ընդհանուր՝ 520 000 ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ ֆինանսական միջոցներ, Ծառայությունը կմատուցվի նախատեսված ֆինանսական միջոցների սահմաններում, Ծառայությունների մյուս մասը կմատուցվի այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող լրացուցիչ համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 20 օրացուցային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5

Հ/Հ՝ Հ/Հ՝ 900011192151
ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Ղեկավար՝ Կ. Փոլադյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ջերմաէներգո» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 22/3, բն. 105
Հ/Հ՝ 2051022005371001
ՀՎՀՀ՝ 02508339
Ինեկոբանկի Շենգավիթի մ/ճ

Տնօրեն՝ Մ. Մելքոնյան

(ստորագրություն) Կ.Տ.